

**V.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

2004 թ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են հետևյալ նախագծերը.

1. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն 6» պայմանագրի շրջանակում.

- գյուղատնտեսության վիճակագրություն,
- բիզնես-ռեգիստր,
- աշխատանքի շուկայի վիճակագրություն,
- հրապարակումներ և վիճակագրական տեղեկատվության տարածում,
- վիճակագրական դասակարգումներ,

2. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ համատեղ.

- մարդկային զարգացման ազգային զեկույցներ,

3. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ.

- 2004 թ. «ՄՈՆԵ» ծրագիր,
- Փոքրամասնությունների հարցերի վերաբերյալ ուսումնասիրություն,
- Սնուցման ազգային հետազոտություն,
- ԴԵՎԻՆՖՈ տվյալների բազայի տարածում,

4. ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի (UNFPA) հետ համատեղ.

- «Հայաստանում կանանց, տղամարդկանց և երիտասարդների վերարտադրողական առողջության բարելավման հետազոտություն /ARM/01/P01/» ծրագիր,

5. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ կառավարության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Աղքատության կրճատման ռազմավարության կարողությունների ստեղծման ֆինանսավորման համար TF 050823» բազմադոնոր դրամաշնորհի միջոցների հաշվին.

- «Աղքատության մոնիթորինգ. ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջականացված հետազոտություն»,

6. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- ԱՄՆ-ի հաշվառումների բյուրոյի փորձագետների աջակցությամբ՝ «Աջակցություն 2001 թ. ազգային մարդահամարին»,
- Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) հետ համատեղ՝ «Սոցիալ-տնտեսական և առողջապահության վիճակագրության կայուն հաշվետվական ընթացակարգի զարգացում». տնային տնտեսությունների հետազոտության հարցազրուցավարների հրահանգավորում,

6. Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- Շվեդիայի վիճակագրական ծառայության հետ համագործակցության նախագիծ «Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում» խորագրով՝
 1. Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն,
 2. Շրջակա միջավայրի վիճակագրություն,
 3. Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր,
 4. Ժամանակի օգտագործման հետազոտություն:

2000 թվականից սկսած, Եվրոստատը նախաձեռնել է վարել երկրների հաշվետվությունների համակարգ՝ ըստ յուրաքանչյուր երկրի: Հաշվետվությունների կազմման նպատակն է նպաստել վիճակագրության դերի բարձրացմանը նոր անկախ երկրներում, ինչպես նաև արտացոլել վիճակագրական ծառայությունների կողմից ձեռք բերված արդյունքները: Ձեկույցները ներկայացնում են նաև այն դժվարությունները, որոնց հետ հարկադրված են բախվել վիճակագրական ծառայությունները, և վերջիններիս առջև ծառայած ու լուծում պահանջող հիմնախնդիրները: Ձեկույցները հնարավորություն են ընձեռում նաև գնահատելու ընթացիկ իրավիճակը վիճակագրական համակարգի զարգացման բնագավառում և անհրաժեշտ են տեխնիկական աջակցության հետագա ծրագրերի մշակման հիմնավորման համար: Ձեկույցները պարունակում են համագործակցության ընդհանուր գնահատականներ, ինչպես նաև հիմք են հանդիսանում նոր ֆինանսական միջոցների լոբբինգի համար:

ՀՀ ԱՎԾ-ն ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակում պատրաստել է «Հայաստանի վերաբերյալ երկրի հաշվետվությունը 2003թ.» գեկույցը (անգլերեն և ռուսերեն լեզուներով, 52 էջ ընդհանուր ծավալով):

2004թ. ՀՀ ԱՎԾ 58 աշխատակից 18 արտասահմանյան երկրներում (Շվեյցարիա, Շվեդիա, Եգիպտոս, Ուզբեկստան, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիայի Հանրապետություն, Մոլդովա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Ավստրիա, Ճապոնիա, Վրաստան, Իտալիա, Գերմանիա, Ղազախստանի Հանրապետություն, Հունաստան, Ուկրաինա, Դրոգստանի Հանրապետություն) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով՝ 2004թ. բնակչության եվրոպական համաժողով, ժամանակի օգտագործման վիճակագրություն, ընդհանուր ժողովրդագրություն, շուկայական տնտեսություն, գյուղացիական տնտեսությունների ռեգիստր, կենսապայմանների վիճակագրություն, ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի միջազգային համադրության նպատակով սպառողական սպրանք-ներկայացուցիչների ցանկի քննարկում և համաձայնեցում, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտությունների արդյունքները, գյուղատնտեսական արտադրության, առևտրի և պարենային հաշվեկշռի վերաբերյալ 7-րդ միջազգային կոնֆերանս, վիճակագրական դասակարգումներ, Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 52-րդ լիակազմ նստաշրջան, հրապարակումներ և վիճակագրական տեղեկատվության տարածում, շրջակա միջավայրի վիճակագրություն, շրջակա միջավայրի ցուցանիշների կիրառում, արտաքին պարտքի վիճակագրություն, պաշտոնական վիճակագրության վերլուծություն և մեկնաբանություն (սոցիալական վիճակագրություն), Անդրկովկասյան տուրիստական նախաձեռնություն, պաշտոնական վիճակագրության հավաքագրումն ու վերլուծությունը Կենտրոնական Ասիայի երկրներում, բերքի մոնիթորինգը և

վիճակագրությունը Ռուսաստանում, գյուղատնտեսության վիճակագրություն, վարչական աղբյուրների օգտագործումը վիճակագրությունում, գեոդերային վիճակագրություն, աշխատանքի վիճակագրություն, բնակչությունը և պլանավորումը Կենտրոնական Ասիայում, Աթենքի համալսարանի տնտեսագիտության դոկտորական ծրագրով հետբուհական կրթություն, ծխախոտի օգտագործման տնտեսական և վիճակագրական վերլուծություն, մարդահամարների և կացարանների հաշվառումներ, ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 29-րդ հերթական նիստ, պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների կիրառումը վիճակագրական պլանավորման մեջ, միջազգային համադրումների ծրագիր:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և դրանցում հրապարակվել է 9 գեկույց մոտ 64 էջ ընդհանուր ծավալով:

2004 թվականին ՀՀ ԱՎԾ 204 աշխատակից մասնակցել է ՀՀ-ում /Երևան, Ծաղկաձոր, Գեղարքունիք, Սևան, Ջերմուկ/ ՀՀ ԱԳՆ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր. օժանդակություն հզորությունների զարգացմանը և աջակցություն տուժյալներին» ծրագրի գնահատման հանձնաժողովի հանդիպմանը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «ՄԱԿ-ի զարգացման ծրագրի երկրի ծրագիրը 2005-2009 թթ. համար» թեմայով հանդիպմանը, ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի կողմից կազմակերպված «ԱՀՌԾ-ի և ԳՀՀ-ի կապը ԵՄ/ԵՀ-ի ծրագրավորման գործընթացում. ներկա կարգավիճակը և առաջարկությունները» թեմայով սեմինարին, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված «Հայաստանյան զարգացումներ» եռամյա վերլուծական պարբերականի խմբագրական խորհրդի առաջին նիստին, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կողմից կազմակերպված Հայաստանի ազգային պատկերասրահի նորացված ՎԵԲ-հանգույցի շնորհանդեսին, ՀՀ ԱՎԾ և Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) հետ համատեղ կազմակերպված «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական գեկույցի շնորհանդեսին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «ՄԱԿ-ի զարգացման օգնության շրջանակի գծով» համատեղ ռազմավարության հանդիպմանը, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ» Եվրասիա հիմնադրամի ծրագրի և ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի կողմից կազմակերպված «Ժողովրդագրական վերլուծություն» թեմայով դասընթացին, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Վաղ մանկության զարգացման ռազմավարության հարցերին» նվիրված աշխատանքային հանդիպմանը, ՀՀ բնապահպանության նախարարության և «Հայաստանի ազգային հզորությունների կարիքների գնահատում» ծրագրի կողմից կազմակերպված «Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ» հաշվետվության քննարկմանը, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված «Հայաստանի առևտրային հարաբերությունները ԵՄ-ի հետ և առևտուրը խթանող իրավական ռեժիմներ» թեմայով

շնորհանդեսին, Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության /ԴԻԷՖԱՅԴԻ/ կողմից կազմակերպված հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրերի տարեկան համաժողովին, ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի կողմից կազմակերպված «Վերապատրաստման կարիքների վերլուծություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի հողի կառավարման աշխատանքային խմբի շրջանակում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմակերպված «Անշարժ գույքի շուկան և հիպոթեկի հասանելիությունը» թեմայով աշխատանքային հանդիպմանը, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Հազարամյակի զարգացման նպատակները Հայաստանում» թեմայով կլոր սեղանի շուրջ քննարկումներին, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան» Եվրասիա հիմնադրամի ծրագրի կողմից կազմակերպված «Արժեքի ավելացման համակարգի վրա հիմնված կառավարման սկզբունքները, Ֆոլքվադեն խմբի օրինակով» թեմայով հանդիպմանը, Բաց կրթության միջազգային ակադեմիայի, «Էլեկտրոնային համալսարան» միջազգային կոնցորսիումի և Տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի մոսկովյան պետական համալսարանի կողմից կազմակերպված «Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կրթությունում» առաջին միջազգային կոնֆերանսին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Մարդկային զարգացման ազգային հետազոտության համար օգտագործվող աղբատության արագ մոնիթորինգի մեթոդաբանություն» թեմայով շնորհանդեսին, ՀՀ առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մանկական մահացության հիմնախնդիրները» թեմայով աշխատանքային հանդիպմանը, Համայնքների ֆինանսիստների միավորման /ՀՖՄ/ կողմից կազմակերպված «Ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման զարգացումը Հայաստանում» թեմայով ազգային կոնֆերանսին, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «Քիմիական նյութերի և թափոնների համահունչ կառավարման, դրա զարգացման և կայունացման ազգային ինտեգրացիոն ծրագիր» թեմայով սեմինարին, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքային զարգացման հանձնաժողովի «Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր» թեմայով անդրանիկ նիստին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված ԵՀ պարենային ապահովության ծրագրի համակարգող հանձնաժողովի հերթական նիստին նվիրված ԵՀ 2003թ. պարենային ապահովության ծրագրի կատարողականի հետ կապված ընթացիկ հարցերի քննարկմանը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Բեարինգ Փոինթ Բարենց Գրուփի և Առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի կողմից կազմակերպված «Մրցակցության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում և ներպետական համագործակցությունը» թեմայով կոնֆերանսին, Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության /ԴԻԷՖԱՅԴԻ/ ֆինանսավորմամբ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Հայաստանում հանրային սեկտորի բարեփոխումների ծրագիր» «Տեղեկատվության

տարածում» ենթածրագիր թեմայով հանդիպմանը, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան» Եվրասիա հիմնադրամի ծրագրի կողմից կազմակերպված «Արդյոք հայկական դրամը գնահատում է իրականությունը» թեմայով կլոր սեդանի շուրջ քննարկումներին, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված ԳՀՀ-ի իրականացման համար ազգային ծրագրի մշակման գործընթացում ներգրավված պատասխանատու պետական պաշտոնյաների համար վերապատրաստման դասընթացին, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ կազմակերպված «ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մոնիթորինգի և գնահատման ազգային համակարգի ստեղծման սկզբունքները» թեմայով սեմինարին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կենտրոնի կողմից կազմակերպված «ԱՊՀ երկրներում սոցիալական մոնիթորինգի համար ներուժի ամրապնդումը՝ Հազարամյակի զարգացման նպատակները և աղքատության նվազեցման ռազմավարության ծրագիրը» թեմայով աշխատանքային քննարկմանը, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կենտրոնի կողմից կազմակերպված «Թմրամիջոցների չարաշահման դիտակայան» նախագծի շրջանակում աշխատանքային սեմինարին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված «Հայաստանի և Եվրամիության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագրի ընթացիկ զարգացումներ» թեմայով շնորհանդեսին, ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Հայաստանի ազգային հզորությունների կարիքների գնահատում գլոբալ բնապահպանական կառավարման համար» թեմայով սեմինարին, ՀՀ կրթության և գիտության նախարարության և Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Կրթության որակի և համապատասխանության» ծրագիր համաժողովին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Գլոբալ մարդկային զարգացման զեկույց 2004 թ.» թեմայով սեմինարին, ՀՀ բնապահպանության նախարարության և տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Հայաստանում տնտեսական գործիքների օգտագործումը բնապահպանական քաղաքականությունում» թեմայով նիստին, ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման միասնական համակարգի զարգացումը» ծրագրի, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունների վերաբերյալ խորհրդաժողովին, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված «ԱԴԱՄՍ – վիրտուալ գրասենյակ» ծրագրի վերաբերյալ դասընթացին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Գյուղական աղքատության հիմնախնդիրները ՀՀ մարզերում» թեմայով աշխատանքային խորհրդակցությանը, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված ԳՀՀ-ի իրականացման համար ազգային ծրագրի մշակման գործընթացում ներգրավված պետական պաշտոնյաների համար վերապատրաստման դասընթացին, ՄԱԿ-ի

մանկական հիմնադրամի և ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետությունում ծնունդների գրանցման համակարգի բարելավումը» թեմայով դասընթացին, ՀՀ առողջապահության նախարարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի և Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի կողմից կազմակերպված «Առողջապահության ազգային հաշիվների (ԱԱՀ) հիմնական հայեցակարգերին և մեթոդաբանություններին» թեմայով խորհրդակցությանը, ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «ԳԵՖ-ի ազգային երկխոսության նախաձեռնություն» թեմայով աշխատաժողովին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված ՀՀ և Եվրամիության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագրի մշակման աշխատանքների համակարգման հանձնաժողովի նիստին, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված «Հիպոթեկային շուկայի զարգացման ոլորտում ԵՄ փորձը» թեմայով շնորհանդեսին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «Աջակցել կանանց առաջընթացին՝ Ազգային ծրագիրը գործողության մեջ» առաջին միջազգային խորհրդաժողովին, Թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության ազգային մոնիթորինգի կենտրոնի կողմից կազմակերպված /Եվրամիության ֆինանսավորմամբ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող/ «Թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային տարեկան ծրագրի հիմնական դրույթները» թեմայով սեմինարին, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Ձեռնարկատիրության ազատ արձակում» թեմայով հանդիպմանը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «ԴԵՎԻՆՖՈ տվյալների բազայի կառավարման» թեմայով ուսուցման դասընթացին, «Հայաստան 2020» ծրագրի կողմից կազմակերպված «Հայաստանում զբոսաշրջության ոլորտի հեռանկարային զարգացման ծրագրի ծանոթացում և հիմնական ուղղությունների քննարկում» աշխատանքային խմբի առաջին քննարկմանը, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված «Ներքին շուկայի պաշտպանության միջոցառումների մեթոդաբանություն» թեմայով փակ աշխատաժողովին, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «2004 թ. համաշխարհային ներդրումների հաշվետվության փոփոխության ծառայությունների ուղղությամբ» թեմայով աշխատանքային հանդիպմանը, Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «ՓիԱրԷսՓի-ին մասնակցության բրոշյուր» թեմայով աշխատանքային հանդիպմանը, ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Հայաստանի ազգային հզորությունների կարիքների գնահատում գլոբալ բնապահպանական կառավարման համար» թեմայով հանդիպմանը, ՄԱԿ-ի

գարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և թմրամիջոցների հետ կապված մահերի և մահացությունների գրանցում/հաշվառում» թեմայով աշխատանքային հանդիպմանը, Համայնքների ֆինանսիստների միավորման կողմից կազմակերպված Համայնքների ֆինանսիստների միավորման կողմից հրապարակված գրքերի և համայնքների տվյալների բազայի համակարգչային ծրագրերի շնորհանդեսին, Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Հարավ-կովկասյան աղքատության գնահատման ծրագիր» թեմայով վիդեո-կոնֆերանսին, ՄԱԿ-ի գարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Սոցիալական մոնիթորինգի կարողությունների հզորացում ԱՊՀ-ում Հազարամյակի գարգացման նպատակների և աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի համատեքստում» տարածաշրջանային սեմինարին, «Մարկետինգի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Ինֆորմացիայի թափանցելիության ապահովումը Հայաստանում անցումային ժամանակաշրջանի ընթացքում» թեմայով դասընթացին, ԱՄՆ միջազգային գարգացման գործակալության, Կրթության գարգացման ակադեմիայի և Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) կողմից կազմակերպված «Սպառողական զամբյուղի բնութագիրն ու մշակման մոտեցումները» թեմայով աշխատանքային հանդիպմանը, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան՝ Եվրասիա հիմնադրամի ծրագրի կողմից կազմակերպված «Տարածաշրջանային տվյալների հավաքագրման նախաձեռնություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը, ՀՀ ԱՎԾ և Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) կողմից կազմակերպված «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցի շնորհանդեսին:

2004 թվականին ՀՀ ԱՎԾ է այցելել 16 հանձնախումբ, 22 փորձագետ Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, Գերմանիայի ԱյՍիՕուԷն-Ինստիտուտ կազմակերպությունից, Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովից, ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի հաշվառումների բյուրոյից, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից՝ ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, Համաշխարհային բանկից՝ տեխնիկական և խորհրդատվական օգնություն ցուցաբերելու նպատակով աղքատության վիճակագրության նախագծի մշակման, 2001թ. մարդահամարի տվյալների բազայի հիման վրա տնային տնտեսությունների գլխավոր ընտրանքի կազմման, ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն 6» պայմանագրի շրջանակում համագործակցության կոնկրետ քայլերի քննարկման, տնտեսական վիճակագրության, միջմարդահամարային ժամանակահատվածում տնային տնտեսությունների հետազոտությունների իրականացման համար գլխավոր համակցության մշակման և 2001թ. Հայաստանի մարդահամարի և կացարանների հաշվառման համար ընթացակարգային պատմության նախագծման, հրապարակումների և վիճակագրական տեղեկատվության տարածման, աշխատանքի շուկայի վիճակագրության, գյուղատնտեսության վիճակագրության, բիզնես-ռեգիստրի, վիճակագրական դասակարգումների, ժողովրդագրական հետազոտությունների համար ընթացակարգերի գնահատման,

պարենային ապահովման տվյալների բազայի զարգացման, ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում «Վիճակագրություն 6» պայմանագրի ներքո իրականացվող նախագծերի /հրապարակումների և վիճակագրական տեղեկատվության տարածման, աշխատանքի շուկայի վիճակագրության, գյուղատնտեսության վիճակագրության, բիզնես-ռեգիստրի, վիճակագրական դասակարգումների/ ընթացիկ իրավիճակը և «Վիճակագրություն 8» պայմանագրի ներքո իրականացվելիք հետագա նախագծերը քննարկելու, աղքատության ներգործության գնահատման և 2003թ. կենսապայմանների ինտեգրացված հետազոտության արդյունքների հիման վրա մոնիթորինգի իրականացման, գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի, ժամանակի օգտագործման վիճակագրության բնագավառներում:

Բոլոր այցելություններն արդյունավետ էին և դրական ազդեցություն գործեցին ՀՀ ԱՎԾ աշխատանքների հետագա բարելավման և զարգացման ուղղությամբ:

2004թ. ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 7 սեմինար-խորհրդակցություն՝ նվիրված ՀՀ ԱՎԾ աշխատակիցների օտարերկրյա գործուղումների և տեղական միջոցառումներին մասնակցության արդյունքներին, վիճակագրության տարբեր բնագավառներին, ՀՀ ԱՎԾ այցելած միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 190 միավոր:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.04թ. թիվ 743-Ա «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքները կազմակերպելու մասին» որոշման, ՀՀ ԱՎԾ աշխատակիցները մասնակցել են վերոնշյալ ծրագրի մշակման աշխատանքներին:

ՀՀ ԱՎԾ միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ (թվով 1190): Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և վիճակագրական այլ նյութեր:

2004թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից պատրաստվել է 15 հրապարակում, որից լույս է ընծայվել 8-ը /ներառյալ Հայաստանի վիճակագրական տարեգիրքը լազերային սկավառակով/, 2 մամլո հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 253 հարցումների:

2004թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 149 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջպետական փոխանակման շրջանակում 2004թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 196 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 42-ը՝ ամսական, 34-ը՝ եռամսյակային և 120-ը՝ տարեկան

պարբերականությամբ: Ընդ որում, 167 վիճակագրական հարցաթերթեր նախատեսված է եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով և 29 հարցաթերթ՝ փոստային:

ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի որոշման համաձայն, ՀՀ ԱՎԾ կողմից 2004թ. ընթացքում ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 167 վիճակագրական հարցաթերթեր (139 էլեկտրոնային և 28 փոստային), որոնցից 31-ը՝ ամսական, 37-ը՝ եռամսյակային, 99-ը՝ տարեկան պարբերականությամբ: